

Տեղեկացում

ՄԱԶԾ «Կայուն համայնքներ» ծրագրի կողմից հայտարարվում է նոր, շատ հետաքրքիր «Քաղցր տուն» անվանումով նախագծի համաֆինանսավորման մրցույթ, որն ուղղված է Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերի 34 սահմանամերձ բնակավայրերում ագրովերամշակման ոլորտում գործող տնային տնտեսությունների աջակցմանը, վերազինմանը և տնտեսական ակտիվության մեծացմանը:

«Քաղցր տուն»-ը իրենից ներկայացնում է գյուղական բնակավայրում մշտական բնակեցված առանձնատանը սննդամթերքի երեք ուղղությունների՝ մուրաբանների, չրերի մեղրամթերքի համալիր վերամշակման ծրագիր: Առանձնատունը պետք է ունենա արտադրության համար նախատեսված առանձնացված տարածք, անհրաժեշտ սարքավորումներ և համապատասխանի սանիտարահիգիենիկ պահանջներին:

Նախագծի իրականացման համար ՄԱԶԾ ԿՀ-ի կողմից կտրամադրվի և կիրականացվի՝

- Գյուղատնտեսական մթերքների վերամշակման սարքավորումներ և արտադրության կազմակերպման համար նախատեսվող գույք,
- վերապատրաստման դասընթացներ և խորհրդատվություն՝ Ծրագրի համապատասխան ոլորտային մասնագետների կողմից:

Ծրագիրը կհամաֆինանսավորի թվով 5 նախագիծ: Շահառուների ընտրությունը կկատարվի 2 փուլով, սահմանված չափանիշներին համապատասխան, մրցութային հանձնաժողովի կողմից:

Մրցույթին մասնակցելու համար՝ հարկավոր է մանրամասն և ուշադիր ծանոթանալ Նախագծին, առցանց լրացնել հայտադիմում և ներկայացնել պահանջվող փաստաթղթերը:

Հայտադիմումների ներկայացման վերջնաժամկետն է ս.թ. մայիսի 11- ը՝ ժամը 18:00: Դիմել կարող եք այստեղ՝ <https://form.jotform.com/SustainableC.../sweet-house-project>